Հաշվետվություն

ՓՄՁ պետական աջակցության 2019 թվականի ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ

2019 թվականի ճշտված պլանը կազմել է 208,120.0 հազար դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսերը՝ 148,196.7 հազար դրամ: 2019 թվականի ճշտված պլանի և դրամարկղային ծախսերի շեղումը կազմել է 59,923.3 հազար դրամ

Հաշվետու ժամանակահատվածում «Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» 2019 թվականի ծրագրի շրջանակներում Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտայինա ջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության ուղղություններով շուրջ 3,500 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 8,305 աջակցություն:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 7.1%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 92.9%-ը ՀՀմարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 708, Արարատի մարզում՝ 521, Արմավիրի մարզում՝ 361, Գեղարքունիքի մարզում՝ 652, Լոռու մարզում՝ 1277, Կոտայքի մարզում՝ 1644, Շիրակի մարզում՝ 591, Սյունիքի մարզում՝ 474,Վայոց Ձորի մարզում՝ 803, Տավուշի մարզում՝ 683, Երևան քաղաքում՝ 591 (Հավելված 1):

2019 թվականի ընթացքում Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից իրականացված աշխատանքները, ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի, ներկայացված են ստորև.

ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում). Սկսնակ գործարարների ձեռնարկատիրական հմտությունների զարգացման նպատակով իրականացվում են «Հաջող սկիզբ» ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս սկսնակ գործարարներին ստանալու բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ, ինչպես նաև հնարավարություն՝ ստանալու ֆինանսական աջակցություն: Ծրագիրն իրականացվում է գերմանական ձեռնարկատիրական հմտությունների զարգացման 2 լավագույն մեթոդաբանությամբ.

- Գիտելիքահեն տնտեսության կառուցում՝ ձեռնարկությունների ձևավորման ճանապարհով (Competency Based Economies through Formation of Enterprises - CEFE)
- Միկրոձեռնարկատիրության մոդելավորման նմանակում (Micro Entrepreneurial Simulation Training - MEST):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» 25 ծրագիր ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան և Աշտարակ, Արմավիրի մարզի Արմավիր և Վաղարշապատ, Արարատի մարզի Արտաշատ և Վեդի, Գեղարքունիկի մարզի Սևան և Ճամբարակ, Լոռու մարզի Վանաձոր և Ալավերդի, Կոտայքի մարզի Չարենցավան (2 ծրագիր), Շիրակի մարզի Գյումրի (4 ծրագիր), Սյունիքի մարզի Գորիս, Վայոց Ձորի մարզի Վայք (3 ծրագիր), Տավուշի մարզի Իջևան (2 ծրագիր) Նոյեմբերյան քաղաքներում, ինչպես նաև Երևան քաղաքում (2 ծրագիր) MEST մեթոդաբանությամբ:

Ընդհանուր առմամբ, նշված ծրագրերի մասնակցել են 364 սկսնակ գործարարներ, որոնցից 238-ը մշակել են գործարար ծրագրեր, որոնցից 159-ը ներկայացվել են ֆինանսական աջակցության: 2019 թվականին ծրագրի շրջանակներում պետական գրանցում է ստացել և սեփական գործ սկսել 70 սկսնակ գործարար: Գրանցված 70 բիզնեսներից 61-ը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 9-ը՝ որպես առևտրային իրավաբանական անձ: Պետական գրանցում ստացած և գործունեություն ծավալած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ

գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 59.3%, ծառայությունների ոլորտում՝ 40.7%:

«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի շրջանակներում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով շուրջ 3400 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 7,318 անգամ աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում Ներդրումների աջակցման կենտրոն-ը Զբաղվածության պետական գործակալության հետ համատեղ իրականացված «Անմրցունակ անձանց ձեռնարկատիրական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում շարունակել է իրականացնել 50 շահառուների ուղեկցման աշխատանքներ, որի ընթացքում բոլոր շահառուներին մատուցվել են իրենց գործունեությանը համապատասխանող հարկային օրենքների, որոշ փոփոխությունների և պարտավորությունների վերաբերյալ խորհրդատվություն՝ հարկային վճարների, հաշվետվությունների, ուշացումների, տուգանքների և այլ հարկային պարտավորությունների վերաբերյալ: Բացի այդ քննարկումներն ընթացել են նաև իրենց բիզնեսի ընթացիկ գործունեության վերաբերյալ, այսինքն՝ խորհրդատվություն է տրվել վաճառքների ավելացման, հաճախորդների սպասարկման որոշ հմտությունների կիրառման, մարքեթինգային մեթոդների կիրառման, որոշ ֆինանսական հաշվարկների վերանայման վերաբերյալ:

Ս.թ. սեպտեմբերի 30-ին գործարկվել է Ներդրումների աջակցման կենտրոնի նոր կայքէջը, որը կծառայի որպես գիտելիքային հարթակ և կհանդիսանա տեղեկատվության, խորհրդատվության և գիտելիքի առցանց աղբյուր ձեռնարկությունների կենսագործունեության տարբեր փուլերում՝ պլանավորման, մեկնարկի, կառավարման և ընդլայման: Այս ամենը նկրագրված է հարթակի "Քո բիզնեսը" հատվածում

ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն/ Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (Վարկային երաշխավորությունների տրամադրում). Հաշվետու ժամանակահատվածում «Սկսնակ գործարարներին ֆինանսական

աջակցություն» ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն են ստացել 81 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 336.3 մլն ՀՀ դրամ, Ներդրումների աջակցման կենտրոնի երաշխավորությունը՝ 345.9 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ-ի միջոցով:

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.3 մլն ՀՀ դրամ, ստացված վարկային միջոցների միջին գումարը՝ 4.1 մլն ՀՀ դրամ:

Բացի այդ, Գործարար նախաձեռնությունների ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում գործող շոկոլադի արտադրությամբ զբաղվող 1 ՓՄՁ սուբյեկտի տրամարվել է 16.7 մլն ՀՀ դրամի վարկային երաշխավորություն: Վարկի գումարը կազմել է 15 մլն ՀՀ դրամ:

Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն. Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Դրամաշնորհները տրամադրվում են համաձայն հաստատված ընթացակարգի: Հաշվետու ժամանակահատվածում «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում 4 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է դրամաշնորհ սարքավորումների տեսքով:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են ՀՀ Լոռու մարզի ճամփեզրյա կայանի և կահավորման աշխատանքները:

Ներկայումս ընթացքի մեջ են կայանի ՀՀ Լոռու մարզում հիմնադրվող Ճամփեզրյա կայանի գործառույթների իրականացման համար գործընկեր կազմակերպության ընտրության աշխատանքները:

Կայանի գործարկումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մարտ ապրիլ ամիսներին:

Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում. Ծրագրային միջոցառման

նպատակն է գործարարությանն ու նորարարությանն ուղղված աջակցություն տրամադրել ձեռնարկություններին Եվրոպայում և Եվրոպայից դուրս: ՁԵՑ-ի ընդհանուր համակարգումն իրականացվում է Եվրոպական Հանձնաժողովի ՓՄՁ հարցերով գործադիր գործակալության (EASME) կողմից:

ՁԵՑ-ի գործունեությունը Հայաստանում իրականացվում է Ներդրումների աջակցման կենտրոնի (համակարգող) և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (գործընկեր) կողմից: Հայկական կոնսորցիումը նշված EASME գործակալության հետ ստորագրել է շրջանակային համաձայնագիր 2015-2020թթ. համար: Սկսած 2016 թվականից ՁԵՑ-ի աշխատանքները Հայաստանում համաֆինանսավորվում են Եվրոպական Հանձնաժողովի կողմից՝ COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ: Մրցույթին մասնակցության արդյունքում, 2019 թվականի համար, կնքվել են ՁԵՑ Հայաստան և Հորիզոն 2020 ծրագրերի համաձայնագրերը:

Գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ. Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի գործունեության շրջանակներում 2019 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, բիզնեսի միջազգայնացմանն ուղված 516 տարաբնույթ ծառայություններ են մատուցվել 241 ՓՄՁ սուբյեկտների, այդ թվում՝ 36 գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում, 14 ՓՄՁ սուբյեկտ կնքել է համագործակցության համաձայնագիր, տրամադրվել են 466 տարաբնույթ աջակցություններ, այդ թվում՝ տեղադրվել են հարցումներ ՁԵՑ-ում, ուղարկվել են հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին, ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները, ստացել են նորարարության կառավարման գնահատման ծառայություն, մասնակցել են իրազեկման միջոցառման, մասնակցել են ՁԵՑ շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին, ինչպես նաև ստացել են անհատական խորհրդատվություն:

Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում. 2019 թվականի ընթացքում Ներդրումների աջակցման կենտրոնը շարունակել է աշխատանքներ իրականացնել միջազգային/դոնոր կազմակերպությունների հետ համատեղ

արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ուղղությամբ: Բացի այդ, աշխատանքներ են իրականացվել նոր ծրագրերի ներգրավման ուղղությամբ:

Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.

«Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում–փուլ 2» Ներդրումների աջակցման կենտրոն/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 2016 թվականի հուլիսի 18-ից մեկնարկած Ներդրումների աջակցման կենտրոն/ՃՄՀԳ համատեղ «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում – փուլ 2» ծրագիրը, որը հանդիսանում է 2013 -2016 թթ. իրականացված «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջ մղում Հայաստանում» ծրագրի շարունակությունը:

Ծրագրի աջակցությամբ Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում իրականացվել է սկսնակ գործարարությանն աջակցության դասընթացներ: Դասընթացների 57 մասնակիցներից 49 ներկայացրեցին գործարար ծրագրեր, որոնցից 25-ը հաստատվեցին Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից ֆինանսավորման համար:

Վայոց Ձորի մարզի ՓՄՁ-ների և սկսնակ գործարարների համար Ծրագիրն իրականացրել է խորացված հայկական «Մեկ գյուղ մեկ ապրանք» (ՄԳՄԱ) մեթոդի վրա հիմնված շուկայավարման դասընթաց «Յուրահատուկ պատմության, վաճառքի յուրահատուկ առաջարկի ստեղծում և հաղորդակցություն» թեմայով: Դասընթացին մասնակցել են 11 տեղական ՓՄՁ-ներ և սկսնակ գործարարներ, որոնք հիմնականում ներգրավված են զբոսաշրջային ծառայությունների մատուցման ոլորտում:

Հարցված 106 ՓՄՁ-ներից, որոնց փորձնական գործողությունների միջոցով ներկայացվել է հայկական ՄԳՄԱ մեթոդը, 52-ը բարելավել են իրենց բիզնեսը՝ ՄԳՄԱ մեթոդի կիրառման միջոցով: ՄԳՄԱ մեթոդ կիրառած 52 ՓՄՁ-ների և մեթոդը չկիրառած 54 ՓՄՁ-ների համեմատության արդյունքում ակնհայտ է, որ մեթոդը կիրառած ընկերություններն

արձանագրել են դրական արդյունքներ, ինչպիսիք են հաճախորդների, մատակարարների, աշխատակիցների քանակի, վաճառքի ծավալների և շահույթի ավելացում:

Ներդրումների աջակցման կենտրոն-ի ենթակառուցվածքների/ անձնակազմի կարողությունների զարգացում

Ներդրումների աջակցման կենտրոն-ի ենթակառուցվածքների զարգացման նպատակով Առևտրի միջազգային կազմակերպության (ITC) օժանդակությամբ մեկնարկել ենՆերդրումների աջակցման կենտրոնում Կառավարման ավտոմատացված համակարգի (ԿԱՀ) համակարգի կառուցման աշխատանքները, որը կներդրվի 2019 թվականին: ԿԱՀ-ը հնարավորություն կընձեռի հատուկ մշակված ծրագրային լուծումների միջոցով ինքնաշխատ եղանակով իրականացնել ծրագրերի արդյունքների մոնիտորինգի ամփոփումը և վերլուծությունը, ունենալ պարբերաբար թարմացվող Հայաստանում գործող ՓՄՁ սուբյեկտների (այդ թվում՝ Ներդրումների աջակցման կենտրոն շահառու) շտեմարան՝ տարբեր չափորոշիչներով ընտրանք կատարելու լայն հնարավորությամբ, արդյունավետ կառավարել Ներդրումների աջակցման կենտրոնի ներքին տեղեկատվությունը և այլն:

Անձնակազմի կարողությունների զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ վերապատրաստման միջոցառումները.

• Սույն թվականի ապրիլի 25-ին Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության համաֆինանսավորմամբ ՀՀ Սննդի անվտանգության պետական ծառայության (ՍԱՊԾ) հետ համատեղ կայացել է սեմինար-քննարկում Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի կենտրոնական և մարզային մասնաճյուղերի ներկայացուցիչների հետ՝ «Սննդի անվտանգության և Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (HACCP) համակարգ-ի» վերաբերյալ: Հանդիպման ընթացքում քննարկվել են սննդի արտադրության ոլորտին վերաբերող պահանջները, սննդամթեքի անվտանգությանն առնչվող իրավական դաշտը, ինչպես նաև սննդամթերքի արտադրության բոլոր փուլերում վերահսկողություն ապահովող Վտանգների Վերլուծության և Հսկման Կրիտիկական Կետերի (HACCP) կառավարման համակարգը և նրա ներդրման հիմնական քայլերը: Քննարկվել են նաև Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի և ՍԱՊԾ-ի

մարզային մասնաճյուղերի հետագա համատեղ իրազեկման և համագործակցության ուղղությունները:

• Սույն թվականիապրիլի 26-ին Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի կենտրոնական գրասենյակում տեղի է ունեցել վերապատրաստման դասընթաց «Տնտեսական զարգացման ծրագրերի մշակում» թեմայով: Վերապատրաստման դասընթացի նպատակն էր՝ հասկանալ Համայնքների ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման (ՀՀՏԶ-ը) հայեցակարգը, ՏՏԶ պլանի մշակման գործընթացը, զարգացնել տեղական տնտեսական վերլուծության՝ տեղական տնտեսություն և ՏՏԶ հիմնասյուների վերլուծության, կարողություններ, կարողանալ ձևակերպել ռազմավարական տեսլականը և հիմնական նպատակները, զարգացնել գործողությունների պլանի մշակման կարողությունները: Քննարկվել են նաև համայնքների ղեկավարների և Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի մարզային մասնաճյուղերի հետագա համագործակցության ուղղությունները:

• Հունիսի 7-ին Ներդրումների աջակցման կենտրոնի և Խնայբանկերի միջազգային համագործակցության հիմնադրամի Sparkassenstiftung für internationale Kooperation e.V. Armenia միջև կնքվել էր համագործակցության հուշագիր, որի շրջանակներում Ձեռնարկատիրության խթանման Գերմանական առաջատար փորձը ներդրվեց Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամում: Հունիսի 11-14-ը տեղի ունեցավ «Միկրո ձեռնարկատիրության նմանակման դասընթաց / Micro Enterpeneural Simulation Training»-ի շրջանակներում վերապատրաստաման դասընթաց՝ Ներդրումների աջակցման կենտրոն մարզային և կենտրոնական գրասենյակների աշխատակիցների համար և Գերմանական մեթոդաբանությամբ անցկացվող ձեռնարկատիրության խթանման՝ «Միկրո ձեռնարկատիրության նմանակում» դասընթացը արդեն իսկ հասանելի է Հայաստանի ՓՄՁ-ներին ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի մարզային և կենտրոնական գրասենյակների միջոցով: